ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2023թ. օգոստոսի 30-ին, N 339-Ա ք. Աշտարակ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՍԱԴՈՒՆՑԻ Ս. ՄՈՒՐԱԴՈՎԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 10-րդ կետը՝ ***որոշում եմ***.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Սադունցի Ս.Մուրադովի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարել մրցույթ, որը կանցկացվի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2023 թվականի հոկտեմբերի 11-ին (հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն N 2):
2. ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնին՝ տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը սահմանված կարգով հրապարակել մարզպետի աշխատակազմի կայք էջում, azdarar.am-ում և հայտարարության տեքստն ուղարկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

3. ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնին՝

1) տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթին մասնակցելու հավակնորդների՝ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը էլեկտրոնային կամ առձեռն տարբերակով ընդունել 2023 թվականի օգոստոսի 30-ից սեպտեմբերի 19-ը ներառյալ, ժամը՝ 9^{30}–ից մինչև 13^{00}-ը /բացի շաբաթ և կիրակի օրերից/ անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնում,

2) պաշտոնի հավակնորդների փաստաթղթերի փաթեթը սահմանված կարգով հանձնել մասնագիտական հանձնաժողովին:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 8/30/2023 19:06:33 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ